

ՏՐԱԿՏ

ԾՐԱԳԻՐ

Հանրաքանակաւ Բաւաստքանակաւ և Զոհաւորանակաւ

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻՒՆԻ 66

ԳՐԱԳԻՐ

ՈՒՐԻՆԸ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1841

ԳՐԱԳԻՐ

Պոմպոյէն նոյնքեր 19 թիւով գիրքն ընկալանք :
ուսկից հետեւեալ լուրերը կը բաղկան չնայեալ
պատերազմին վրայ :

Անցած օգոստոս ամսու 26 ին անգղիացիները
պաշարեր ու աւեր են Վոյի ըսված չնայեալ քա-
ղաքը ու անոր շրջապատը ու հզօր պատնէշնե-
րուն տիրեր են : Հինգ հարիւր թնդանով են աւեր-
ու մեծ մասը չնայեալ պատերազմական նաւակնե-
րուն՝ անգղիացիներուն ձեռքը անցեր է : Զինու-
թիւնները թէպէտ քիչ ատեն պատերազմի են ,
բայց քաջութեամբ ծեծկըմեր են , ու հարուստ
սուն հողի չորի սպաներ են իրենց կողմանէ :
անգղիացիներէն խիստ քիչ մարդ մնաւ է : Նաեւ
շատ համարանոցներ զօրքերու պաշարներովը լի-
ցուն , յաղթականներուն ձեռքը անցեր է :

Հիմակ անգղիական զօրքերուն մէկ մասը Վո-
լանկա ըսված կղզին մնալու են , (որ կը բաժնուի
Վոյի քաղաքէն նեղուցով մը) բանի մը պատե-
րազմական նաւերով , ու մնացեալ զօրքերը ու նա-
ւատորմը գէպ 'ի Հիւսիս առաջ երթալու են :

Մատակարար անուն Գիւրգիսեան շոգինաւոր խոր-
տակեր է սեպտեմբեր 19 ին ու մէջը եղածներուն
շատը չնմանալիքն են ձեռքը ընկեր են : Անգղիա-
ցիները կրկին տիրեր են Վոլանկա կղզիին :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Արտակէտ :

Արտակէտը շատ գարշելի մոլութիւն մըն է , ա-
նանկ որ աս արտակէտը անձը՝ ատելի է ամենուն .
որովհետեւ շահասիրութիւնը ստակ գանձելը ամեն բա-
նէն աւելի ընտելով՝ գիշերցորդի անհանգիստ է , ոչ իր
պատուոյն երբէք հոգ կը տանի և ոչ իր անձին կամ վաւա-
կացը բարեկարգութեանը վրայ փոյթ մը ունի , այլ ոսկին
և արծաթը իրեն մէկ կողմը մը ըրած իրեն՝ անոնց միայն
պաշտօն կը մատուցանէ միշտ , զանոնք խնամով կը պահէ .
որքերուն և սիրիներուն կամ բոլոր ազգին զրկանք ընելը՝
ոչինչ բան մը կը կրնայ իր աչքին : Անա՛ ասանկ ազա-
մարդէ մը քիչ մը օգնութիւն խնդրէ՝ աղագոգուտ բանի մը
համար . նայէ՛ ի՞նչպէս իսկոյն տակնուվայ ըլլալով՝ ու
հաղարու մէկ անտի պատճառներ բերելով , մէկ ստակ մը
օգնութիւն չընենէն՝ ի՛ զատ՝ այն օգտակար բանին խափան-
ւելուն ալ սրտանց ջանք կընէ : Չի գիտ եր 'իսկըն որ այն

Պարոն Մեքուլի Վաւթեան (Սաղիսագեանց , որ
քանի մը ամիս առաջ գիրք մը հրատարակած է 'ի
Կալիպիա , Պատմութիւն Հին Հնդկաստանի անու-
նով , հիմակ տեղի ալիտի տայ իր ճանապարհորդու-
թիւնը 'ի Հոյաստան , 'ի Պարսկաստան , 'ի Տաճ-
կաստան և յԵւրոպաստան : Տպագրութեան բոլոր
ծախքը կը հասնի 3000 Կալիպիայու Ուսկի ու-
սինքն 30000 տաճկի դրուռը . մի՛ վ որ ուզէ աս
գումարը հատուցանել , իրեն անունովը պիտի
տպել յիշեալ գիրքը . որ երկու հատուց ըլլայ պի-
տի . միայն երկու հատուցն գինը՝ 16 Ուսկի է
այսինքն 160 տաճկի դրուռը : Պարոն Ս . Յ . Մե-
քուլը՝ աս գործին ստորագրութեանը համար հոգա-
բարձու ընտրված է :

Եր յուսանք թէ՛ Տաճկաստանու բնակիչ բազ-
մաթիւ հայերը սիրով կը ստորագրեն , յիշեալ
աշխատանքութեանը տպելուն նպատաւաւորոյց
ըլլալու համար , ոչով հեղինակին ուսումնական ու
ազգասիրական ջանքը յաջողութեամբ պիտի պը-
սակի :

Մանթեօր () թիւ 26-ին մէջ կը կարդացուի :

Չմիւսնիս քաղաքի՝ իր գիրքին և աւելուորին
տարածութեան պատճառովը Մարտի սանձախին
գլխաւոր փնտիւրը ըլլալով , կառավարութիւնը ար-
ժան դատեցաւ որ աս գումարին կառավարիչ՝ Մար-
տին Սեմուէլին Սիստ փաշան , և մուհապը Սա-
լիս պէյը հոն բնակին : Ահապաւ Մեքուլի ազգի

բերած պատճառները՝ որոնցմով իր ազաճութիւնը ծած-
կել կուզէ , Վիտիւնիսի վերաբերելին կը մնան , որու
բազմաթիւ պատճառներէն իր՝ բուն գիտաւորութիւնը
շատ ազգի կը կրնան :

Ան տեսակ մըն ալ խիստ ազաճնէր , որ չափէ դուրս
կծծի բնութիւն մը ունենալով՝ մինչև անգամ մարդուս
կեցութեանը պիտի հարկաւոր եղած բաներէն կը զրկեն
զիրեն , ու յետին թշուառութեան մէջ ընկած աղքատի
պէս օրերնին կանցունեն . բայց շատ անգամ կը պատահի
որ՝ կամ իրենց դարձելի կեանքը վերջացունելէն ետեւ
ժառանգները կը վայելն անոնց հարստութիւնը , կամ
վարպետորդիները հնարքով մը կը յափշտակեն զանի ,
ու պատճառ կը լինի որ յուսահատութեան մէջ ինչան ու
չարաչար մահովմը կը քորուին : Ահա ասանկ կծծիներէն
մէկուն հետեւեալ գիւլածը պատահեցաւ , որն որ զօսա-
նաց համար արժան կը համարենք զնեւ հոս :

Մանթեօր Վիտիւնիսի երեւելի քաղաքներէն մէկուն մէջ
մէկ ազաճ մարդ մը կար , որ խիստ կծծի ըլլալուն համար

խմանալով , որ շատ օգուտ առաջ պիտի գայ աս
խմանալուն կարգադրութեանն՝ որուն նպատակը պի-
տի ըլլայ քաղաքին կառավարութիւնը և մաքսը
բարեկարգութեան մէջ մոյցունելու , արքունական
հրամանագիրով մը հաճութիւն տրուաւ և հաստա-
տեց Ս . Վրան՝ ըրած որոշումները : Հետեւեալ
հարկ եղաւ Մարտին մուհապը մը անունէն , ուստի
Ս . Վրանը արժան համարեցաւ աս պաշտօնը յանձ-
նել հաճի Ս . Մարտի աղային , Սարուխանի մուհա-
պըին՝ որ քաջ տեղեակ է Մարտին գաւառին ե-
կամութեանը : Սարին Սեմուէլիսի Սեմուէլին հա-
տատելով աս որոշումները , հրաման տուաւ հաճի
Ս . Մարտի աղային որ իր որդւոյն յանձնէ Սարուխանի
մուհապըութեան պաշտօնը :

Ս . Վրանը հրամանով Սեմուէլին () սման փաշան
ալ Սարուխանի գլխաւորական կառավարիչ անուա-
նեցաւ Սեմուէլիս փաշային տեղը , որն որ Մարտ-
նու գլխաւորական կառավարիչ եղաւ :

Սեմուէլին մուհապը Սեմուէլին պէյը , անհոգու-
թեամբ յանցաւոր գտնվելով իր պաշտօնին մէջ՝
ինկաւ իշխանութեանէն . և Ս . Վ . Սեմուէլին
տիրին յանձնեց անոր պաշտօնը :

Սեմուէլին կրակէն ելլողներուն համար հաստա-
ւած մարդասիրական ընկերութիւնը քանի մը բը-
նակարաններ շինել տրուաւ , որոնց մէջ 96 սենեակ
կան . անոնց վրայ վիճակ ձգելով աղքատներուն բաժ-

Վրիս կանանէն զանի , Վիտիս ամուսնացած էր աղ-
քատի մը աղջկան հետ , ու կերակուրի ծախք չընելու հա-
մար՝ շարունակ կը պտըտէր բոլոր քաղաքին փողոցները ,
ու ամեն ուսուկը ծախողներուն խանութէն պանիր և ու-
րիշ ուտելիք մուրալով՝ ասանկ իր օրը կանցունէր ամե-
նէին մէկ ստակ ծախք չընելով ուտելիքի համար՝ թէպէտ
շատ ոսկի դիզած էր : Սեմուէլին զատ՝ երբոր կը հարկաւորէր
որ գիր գրէ , զանց կառնէր կետագրութիւնը և գլխադի-
րերը խնայելով՝ կօշիկի ներկը իր թանաքի տեղ կը դրո-
ծածէր :

Սեմուէլին իր կուս մը երբոր նստած էր ասիկա իր սենեկին
մէջ աղտոյ ճրագով մը՝ իր ունեցած ոսկիները համբերու-
համար , յանկարծ դուռը դարկին , առջիկ անգամ՝ կամաց
մը , բայց ետքը խիստ ուժով :

— Սեմուէլին , ըսաւ Վրիս , շուտ մը վերցունելով
գանձը և ծածկելով անկողինին տակը՝ հնոտի լաթերուն
մէջ :

— Սեմուէլին կանանէն գէպ մէկը . . .

— Սեմուէլին կը լսէ Նեմուէլին , պատասխանեց Վրիս :

նեցին . զարմանալին ան է որ խիստ ողորմելի աղ-
քատներուն ինկաւ բոլոր սենեակներուն վիճակը :

Մինչև հիմայ աս ընկերութեան ժողած զրամը
560 հազար զուռուշի չափ հասաւ որուն 300 հազա-
րը արդէն ծախք եղաւ ամեն տեսակ օգնութեան
և յիշեալ բնակարաններուն համար . մնացած դու-
մարով մէկ մեծ տեղ մըն ալ պիտի շինէի : Եւրոպ
տուններուն միջ մասը տակաւին չի շինւեցան և կը-
կարծուի թէ շատ ատեն ևս սնանկ պիտի մնան .
բայց շուրաները գրեթէ բոլորովին շինւեցան :

Սիր Սօգէ Մօնթեֆօրին՝ քաղաքիս կրակէ
հլոցներուն համար խրկեր է Ս . Խաթ Բինբերկին
103 լիւրայ սթէլուին՝ որ ժողովուրդ է անոյրի ,
Պէրուի և Տուալիւնի մէջ : Բիւկէյ ՚ի դատ 33 լի-
ւրայ սթէլուին ևս խրկեր է Լուսոսի աղքատ հրէա-
ներուն համար :

Ի իվորնայէն Ս . Մարիուրի և Ս . Թէտէսկի
490 լիվորնայի լիւրայ խրկեր են յիշեալ Բինբեր-
կին :

— Սարսափելի յոնցանք մը դործւեցաւ Պուր-
նապաղ գեղին մէջ . 15 տարեկան տաճիկ տը-
ղայ մը ատրճանակով զարկաւ սպաննեց իր հայրը ,
աս պատճառով որ անկէա իր մայրը ձգեր էր և
կուգէր ուրիշ կին մը առնել :

— Սալիհ պէյր՝ Իգմիլու նոր տէֆտէրտարը ,
հրէկ հասաւ հա Ս . յորենէն :

Կըսէի թէ՛ Ս . Բարձրութիւն Սաիտ փաշան
ալ մօտ օրերս պիտի Իգմիլ դայ :

— Աւարտայի երբեք ծովագետ պարոն Պան-
տիէյուն անցած շաբթու կոստանդնուպոլսէն է-
կաւ :

Մարա Թայմը օրագրութիւնը անցած նոյեմբեր
ամսու 16 ին հետեւեալ լուրերը՝ կուտայ , Պանդայի
օրագիրնեքն բաղելով :

« Մուլմէի և Ռանկունի նամակները կը հաստա-
տեն , որ Պրմայիններուն հետ հարկաւ պատերազմ
պիտի ընեն Բնդիւսցիք : Պրմայի թագաւորը՝ Ռան-
կունէն 70 մղոն հեռու է , ու 15 օրվան մէջ Ռան-
կուն պիտի գայ 150 կամ 200,000 զօրքով : Եւս զօր-
քերը գետէն իջան 18,000 նաւակով . Պրմի և փէր-

հանի իշխանները կը հրամայեն առաջապահ և վեր-
ջապահ զօրքերուն , ու մէկ օրու ճամբայ հեռա-
յած են արքայական բանակէն : Եւս ի հրաժարեալ
թագաւորը իր ընտանիքներով բանակին մէջն է .
աս զգուշութիւնը բոլոր Պրմայի թագաւորը , որ
չըլայ թէ ապստամբութիւն մը հանէ :

« Միւսի մէջ մինակ պաշտօնատար մը թորուցին .
բայց անոր կինը և որդիքը ևս պատանդ առին :
Ռանկունի բնակիչները թէպէտ հանդարտ են , բայց
եւրոպացի վաճառականները կը պատրաստուին
Մուլմէն երթալու : Կըսէի թէ Պրմայի թագաւորը
անգլիացոց հետ պատերազմ ընելուն բուն պատճա-
ռը աս է որ՝ վերտին ձեռք բերէ Գէնասէրիսի
գաւառները , որ հիմակուհիմայ առանց պաշտպա-
նութեան մնացած են :

« Բնդհանուր կառավարիչը անգլիացոց՝ հրաման
ըրաւ քանի մը գունդ զօրքերու որ Մուլմէն երթան ,
ու Բրազանի սահմանագլուխներն ալ զօրք խրկէյ .
երկու հաւ երկրթէ շոգենաւ Բիւսն և Սէտիւղ ,
որոնք Չինաստան պիտի խրկուէին , ուղղակի Ռան-
կուն երթալու են . կըսէի թէ ընդ ամենը ութը
շոգենաւ պիտի գտնուին , որ բուսական ծովային զօ-
րութիւն մը կըլայ հոն :

« Վերջապէս անանկ մէկ գաւ մը պիտի տըրւի
Պրմայի թագաւորին , որ շուտով չի մոռնայ : Բնդ-
ղական զօրութիւնը Պրմայի մէջ հինգ հազար հոգի
է , 40 կտոր թնդանօթով :

« Չինէն նոր լուր մը չունինք . անգլիական նա-
ւատորմը որ Լանկ-Բանկէր , ալ Էնլիի հիւսի-
սային կողմը կըլծալով՝ շատ հեռու է Պանդայէն . աս
է պատճառը որ ան կողմի թղթերը կուշանան :

ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոս , 14 Յուլիաներ :

Հռոմայու հայրապետը մեծագին ընծաներ խրկեց
Սորին Բարձրութեան Մէհէմէտ Էն փաշային ,
փոխանակ ալապատոր (սու մէրմէր) սիւներուն ,
որ Ս . Բարձրութիւնը Լուս խրկած էր Թոսթա-
նայու հիւպատոս Ս . Թոսէղիին ձեռքով , որ աս
գործը գլուխ տանելու համար՝ սուրբ Գրիգորի կար-
գին առաքեալ անւանեցաւ յիշեալ Արքապանէն :

զարնէն մասններուն յօգուածները դրանք զանազով
քիչ քիչ կը մաշեն անեն զանի : Բայց բաժնի ինչու
մեծամեծերը ձեռք բռնեն ևս :

— Ս ասն զի դուրսը սաստիկ անձրեւ կուգայ . ես յանձ-
նառու կըլամ բոլոր շրջիլ բան թէ մեծամեծերս թրջիլ :

— Եւս աղէկ , պոռաց անատները Բրիա բարձր
ձայնիւ , շատ խնայող մարդիկն էք ուրեմն , և կընաք ին-
ծի վարժապետութիւն ընել : Տիրակ թէ որ ևս ալ ասանկ
ըրած ըլլայի՝ իմ մեծամեծերս ալ տակաւին նոր կըմնային :
Ինչու որ այն թշուառական կօշկարարները այնչափ ա-
գահ են որ մեզի պէս աղքատ և աւաքիկ մարդիկներուն
մեծամեծերը որ շատ քիչ կըլինանան : Եւս ինչէք , բարե ,
իմ մեծամեծերը ցոյնելով , հաղիւ թէ եօթը տարի կըլ-
լայ որ ևս կը հազնիմ ասոնք և շատ կըլինանամ որ գուցէ
մօտերս պիտի պարտաւ որիմ կարկատել տալու զանոնք :

Եւ շարունակելով իր խօսքը՝ մարեց ճրագը ըսելով՝
կարծեմ թէ խօսակցութեան ժամանակ չպէտք չէ մե-
կը գմէկ տեսնալ . ուրեմն խնայենք ձեռք . ու սկսաւ երկար

Ն . Բ . Սէրասքէր Մուստաֆայ փաշան հասաւ
հոս քանի մը գունդ զօրքերով . կը յուսանք առանց
երկբայութեան , որ աս բարձրադատու պաշտօնատա-
րին խոհեմութեամբը՝ բարեկարգութիւնը վերտին
կը հաստատուի Լսորեստանի մէջ : Լիւսակուհիմայ
հարցուիորձ ընելու զբաղեալ է , վերջին աղմուկ
ներուն վրայով . նաեւ աս կողմի բոլոր փաշաները և
կառավարիչները Պէրուի կանչեց , որ անոնց հետ
մէկտեղ հարկաւոր եղած կարգադրութիւնը ընէ , որ
խուովութիւն մը պատահէ լուր ըլլայ նէ շուտով ա-
ռաջքը առնուի :

ՄՈՒՏՈՎԱՅ

Եւս . հինգշաբթի 21 հոկտեմբեր 1841 :
Ալլիմայ Ռամանեսարա (որ թարգմանի Լուով
մաշկան մեղուն) կըլած Մուստաֆայի օրագրութիւնը
աս վարի յայտարարութիւնը կը հրատարակէ մեր
աղբին գրադիրութեանը վրայ :

Գրականութիւն Լայկական :

« Հայոց աղբը կը ձանձաղի մէկ ալթուն հաւա-
« տարիմ և ճարտար ժողովուրդ մը Լայերը՝ որ
« հին ժամանակէն պանդխտացան այլ և այլ կող-
« մերը Լաւրոպային , խալ ՚ի Մուստաֆայ յամին 1400
« ին , կը գտնուին այսօր տեղաւորեալ գրեթէ ամ-
« մեն քաղաքներուն մէջը պէս պէս յաջողակ առու-
« տուրներով . և մէկտեղ կաշխատին վաճառական
« նութեան ծաղիկուն համար :

« Բոլոր Երեւելեան ժողովուրդներէն , Լայոց
« աղբը կորոշվի այսօր իրեն ուսման աշխատու-
« թեամբը : Իր ուսումնարանները և տարաբաները
« կը շատնան ամեն քաղաքներուն մէջ : Լուսակա-
« լուր ուսումնարանները են . Խոտիլայի մէջ՝ Մու-
« րատեան և Ռաֆայէլեան դպրոցները . Տաճկա-
« տանին մէջ՝ Իգմիլիկը և Իւսկիւստարին . Լանդ-
« կաստանին մէջ՝ Ալալաթայի դպրոցը . Ռու-
« սաստանին մէջ՝ Աղարեանց ճեմարանը ՚ի Մու-
« քուայ , և Երեսխանը ՚ի Թիֆլիզ :

զոյց մը խնայողութեան վրայօր : Բայց մէկէնիմէկ
ընդմիջեց խօսքը ըսելով , բարեկամ , ինչու այդքան կը-
շարժիս , գուն իմ աթոռս պիտի մաշիս :

Եւս , մի վախճաք , պատասխանեց միւսը , բան մը չեմ
ըներ , վարտիքս կը հանեմ որ՝ աս յարգապատ աթոռին
վրայ չի մաշի :

— () , կըլնեց Երրիա , մինչև հիմայ անանկ կը կար-
ծէի թէ ես եմ առաջին օրինակ խնայողութեան . բայց կը-
տեսնամ որ գուն ինծի կանցնիս . ես ալ քեզի պէս կը-
նեմ ինքնալ վարաիքը հանեց ու սկսան երկու
ախոյեան խնայողութեան վրայ խօսիլ :

— Բայց ի՞նչ կընես , հարցուց Երրիա , գեւ վար-
տիք չի հանեցիր , որ այդքան կը շարժիս :

— Եւս , պատասխանեց բարեկամը , գետնը կը-
նստիմ որ աթոռ չի հինցունեմ :

— Եւս կըլնեմ , ես ալ քու օրինակիդ կը հետևիմ .) ա-
սանկ ըսելով ագահը ինքն ալ գետնի վրայ նստաւ : Բայց
բաժնիքանի՝ կըլայ քու օրագրակցդ :

— Բանի՞ . դուք ինծի ՚ի ծագը կը շարժէք . . . :

մէկմալ ասանկ ուժով մի գարնէք դուր . հերիք է որ-
չափ որ դուր մաշէր է զարնէն :

Լուսակ ըսելով զգուշութեամբ բացաւ դուռը և տեսաւ
որ ներս կը մտնէ մէկ մարդ մը հնօտ լաթերով . անանկ որ՝
ագահին հագածներէն բնաւ տարբերութիւն չունէին .
ասկէց զատ տարբեր բոսիկ էին ու մեծամեծերը ձեռքը
բռնած էր :

— Գուր ո՞վ էք , հարցուց Երրիա :

— Եւս մէկ աղքատ մարդ մըն եմ , որ չեմ գիտեր ինչ-
պէս կառավարի իմ ունեցածս , և որովհետեւ զարմանալի
բաներ ըսած եմ ձեր խնայողութեան մեծ արհեստին վը-
րայով , միտքս դրի ձեզի՛ հետ քիչ մը տեսնելու , որ
խրատ տար ինծի , ըստ որում՝ դուք վարպետ էք խնայո-
ղութեամբ վարելու :

Եւս աղէկ , պատասխանեց Երրիա , անանկ օգ-
տակար իրաւաներ տամք զի , որ առանց ագահութեան
գէշ անունը ունենալու՝ կարող ըլլաք աղբիլ քիչ ծախք
ընելով : Բայց առաջին դատ աս ըլլայ քեզի , որ երբ տուն
կը գտանաս՝ դուր կամոց զարնես . վասն զի ամեն մէկ

Հակուտակ բաղդը: Ատքը մեկնե՛ն՝ մեկ սաստիկ կատա-
ղու՞թի՛ն մը գալով՝ վրան՝ միտքը դըրաւ որ ինքզինքը
մեռցունէ. ուստի չուան՝ մը առնելով՝ վազեց դուրս ելաւ
տընէն, ու աղէկ մը կապելէն ետքը մէկ ճանկի մը՝ որ սեան
մը վրայ բնեւոած էր, հանդղցը վիղը անցուց ու կախե-
ցաւ աս կճծի մարդը: Այսց նոյն վայրկեանն իր զրացի-
նիբէն բարեւիրտ մարդուն մէկը տեսնալով՝ զանի, վազեց
եկաւ ու չուանը կտրեց. անանկ որ Արբիա դեռ ողջ գե-
տինը ինկաւ. ու գինքը ազատողին շնորհակալ ըլլալու

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՀԵՂԻՍՏԻՆ

Պոմբալ, 19 Վոյեմբեր :

տի գայ անկէց : Եւ ամէնք զէմ է իրաւունքի , բարեկամութեան պարտուց ու աղէկ դրացութեան : () ամենեան Վրասն օգուտը և իր հպատակներուն հանդարտութիւնը վտանգի մէջ է . հետեւեալը ի . Վուռը կը ինքնազրէ իր բարեկամ և դաշնակից իրեք տերութիւններէն՝ որ յորդորեն յունաց տէրութիւնը աս վէճերուն վախճան մը տալու , ու ինքզինքները կանոնաւորելու . անշուշտ պէտք է որ խռովարարները ասկէյ ետե կարող չըլլան ապրտաւարութիւն զրգուել հաճկաստանի մէջ . այլ բարեկամ տէրութեան մը հետ ինչպէս որ պէտք է անանկ վարելին :

Թէ որ բարեկամ տէրութիւնները աս գործը հոգ տանին ու բարի վախճան մը առաջ դառնըլայ նէ անկից : Հաւատ հաճելի կըլլայ . եթէ ոչ , որոշված է որ աղէկ ձեւաւորութիւն չի պիտի ըլլայ յունաց առուտուրին՝ օգտին և գործընդուն՝ ու լոնք տաճկաց կառավարութեան օգնութեանը և անոր միջնորդութեանը կըկարօտին : Ենթադրու է իրաւունք յայտնի է . այլ շատ հարկաւոր է որ հատուկ ընէ : Հոնաստանի վերոյիշեալ յօդուածներուն վրայով : Ենթադրու է իրեք տէրութիւնները իրենց ալ դարաւորութիւնովը պիտի ընեն և իմանան աս դաշնակցութիւնը իրաւացի ըլլալ . անանկ ալ դժգոհութիւններուն իրաւացի ըլլալը . որ առաջ կուգան ուարտութիւնները և վտանգները՝ որ առաջ կուգան ան կերպ բանիւր երկարելին : Ի . Վուռը կը ինքնազրէ զհասարակներէն՝ որ աս բողբոջ ծանուցանեն իրենց թաղաւորներուն , և հոնաստանի պաշտպան եղող տէրութիւնները յորդորեն , որ շուտով հոգ տանին , 1 . հոնաստանի մէջ եղած տաճկաց կառավարութեան վերաբերեալ վէճին վախճան մը տալու , ան յայտարարութեանը համեմատ՝ որն որ իրենց դատարանները ներկայացուցին յունաց կառավարութեանը , 2 . կարգի գնել մէկալ վէճերը որ վերը նշանակվեցան :

անզը գէպի անոր դարձալ խոժոռ աչքերով ու գիւհահարի պէս պօռաց ըսելով , ո՞վ խրկեց քեզի , սա՛տանայ :

— Ենթադրու է , պատասխանեց մեկալը , պէտք է որ մարդ ինքզինքը մեղցունէ . ուրեմն շնորհակալ եղիք ինձի որ քեզի ազատեցի . ինչու . որ զժողովին մէջ՝ որ անշուշտ երթալու ես , չի պիտի գտնաս և ո՛չ ստակ մը . . .

— Իրաւունքս , պատասխանեց ազա՛հը , մէկալ աշխարհքին մէջ պիտի չի ստանա՞մ իմ կորստնոցոցած ոսկիներս : Սրեմն աղէկ ըրիք , բարեկամ . . . բայց չուանը որն որ կորեցի՞ր՝ նոր էր , պէտք է որ հատուցանես ինձի անոր գինը . . .

Վրացին կընայէր անոր անթարթ աչքով և կըկարծէր թէ երազ կըտեսնէ . իսկ Լըրիա առանց պատասխանի սպասելու , քիչ մը կատղած և քիչ մը գոհ խիղջ տուն դարձաւ . ու սկսեց վերստին համրել իր դրամները , յուսաւով որ գուցէ սխալած է . բայց երկու տոպրակը կը պակսէին . . .

Ղըրմէի մարդը բնաւ չի կըցտամաքը բերել , թէ իրեն այցելութիւն եկող բարեկամը գողցած էր զանոնք , իր կնոջը հետ խօսքերին մէկ ընելով :

Սերգայէս կէս օրէիդաւ , ու խիստ անօթցած կըստիպէր հոգ ուտելու . բայց մոռնելով բարեկամին ըսածը՝ նոյն օրը համբերեց , բերանը բան մը չի դրաւ : Լըրիորդ

Լիֆիոն : հաճկաստանի աֆիօնին գործաւնու թիւնը բանի մը ժամանակէ՛ ի վեր գրեթէ դադարեալ էր , բայց կերելի թէ հիմակ նորէն կուգին հաստատել աս առուտուրը : Սօտ օրերը Լիֆիոնայէն նաւ մը եկեր է Սինկափոր՝ աֆիօն բեռնաւորված , բայց տակաւին չի լըսեցու ինչ գիներով վաճառվելը : Տեղւոյս Սալվայու աֆիօնին գինը՝ 380-390 թալէնի կըվաճառվի սնտուկը , որ 14½ լիտր կըբաշէ . ամմեն մէկ լիտրը 144 տրամէ . ըսել է որ մէկ սնտուկը 80 ¼ չէքիլի չափ կուգայ : հաճկաստանի աֆիօնի արժողութիւնը՝ 30-40 թալէն պակաս կըվաճառվի միշտ Սալվայու ապրանքէն : Թէպէտեւ շատ աֆիօն չի կոյ աս կողմերը , բայց և այնպէս անշարժութեան մէջ է հիմնականիմայ :

ՏԵՂԻՍՏԻՆ

Օմուսիա , 26 Վեկտեմբեր :

Քաղաքիս առուտուրը շարունակ խիստ թուլ է , ու հասարակօրէն բոլոր ապրանքայ գիները ցած են . Լըրիայի ամմեն կողմերէն եկած ձախորջ լըրերուն պատճառով . ուստի աս շաբաթ շատ քիչ գործաւնութիւններ կ'ընեն :

Բամպակ : Ինձ անշարժութեան մէջ է . բաւական ապրանք եկան դուքսերէն ու շարունակ կուգայ ամմեն օր , բայց ծախու աւանդ խիստ քիչ կայ հիմնականիմայ . աս օրվան արժողութիւնը հետեւեալն է :

Սպարձա՛ 230

Քրքաղա՛ 225

Ֆասոն՛ 220

Բուրդ : խիստ թուլ է ու շատ ապրանք կայ . 175-185 դուռուշ խանթարը ըստ տեսակին դժուար

օրը թէպէտ իմացու որ աս ծոմապահութիւնը իրեն վնաս պիտի տայ , այսու ամենայնիւ առանց կերակուրի մնաց , ու երրորդ օրը՝ խեղճ Լըրիան չէր կրնար ոտքի վրայ կայնիլ , այնքան արկարացած էր . ան ատենը կարծեց որ բնութեան ճիգն է , ու ան ալ անցնելէն ետքը՝ ալ ամենեւին ուտելիքի կարօտ պիտի չըլլայ : Հիւրաւի անանկ և զաւ . վասն զի երրորդ օրը մեծած չտան զանի իր անկողինին մէջ :

Լըրիայի կինը քիչ մը տրտմութիւն ցըցուց իր երկանք մեռնելուն վրայ . բայց շատ հարստանալով՝ քանի մը շաբաթ անցնելէն , ետքը , ամուսնացու այն արտաւորութեամբ հետ , որ կծի ձեւացուց վնքը և բնաւ կերակուր չուտող :

Թարդ . յիտալական լիգուէ

Սարգար Ս . Հ . Չանախ

Հայկական . յաշա . վարժարանիս :

ըսվաճառ է :

Տորոն : Կըհաստատեն թէ , 5000 չուփալի չափ ապրանք կայ քաղաքիս մէջը . հիմնականիմայ ծախու աւանդ գրեթէ չի կայ . Պախըրու ապրանքը՝ 235 դուռուշ է . Վարամանինը , ու Կէօրտէսինը՝ 220-230 ըստ տեսակին :

Եզան մորթ : Բաւական ապրանք եկաւ Կեսարիայէն մօտ օրերը ու գիները իջան . աս օրվան արժողութիւնը՝ 5 ½-5 ¾ դուռուշ է օխան :

Լիֆիոն : Թուլ է , թէպէտեւ շատ ապրանք չի կայ . մէկ երկու սեփեթ երբեմն երբեմն կըծախի 69-70 դուռուշ չէքին :

Նհհհհ : Բաւական ապրանք կայ քաղաքիս մէջը , առանց գնոյ աւանդի . 25-26 դուռուշ օխան հաղու թէ կըվաճառվի :

Քիթի : Թէպէտեւ շատ ապրանք չի կայ , բայց և այնպէս խիստ թուլ է . աս օրվան արժողութիւնը՝ Պուլտուրի ապրանքը՝ 12-20 դուռուշ է օխան ըստ տեսակին :

Փալամուտ : Եւ տարվան փալամուտները աղւոր են , որովհետեւ անձնի չի կերան . չափաւոյ ապրանք կայ քաղաքիս մէջը . աս օրվան արժողութիւնը՝ նը հետեւեալն է :

Թրեսուտ տեսակ՝ 83-85

Ինկիլիզու՝ 62-65

Երկրորդը՝ 48-50

Բեֆուզոն՝ 28-30

Տորոն : Բաւական ապրանք կայ ու քիչ մը թուլ է . Բըլիւր յու ցորենը՝ 20 դուռուշ է խոտան գընուպուլայ քիլին . Վնեայինը՝ 18-19 . Բըլիւրինը՝ 24 . Գարին 9 ½-10 :

Նօհուա : Կուգել . աս օրվան արժողութիւնը՝ 24-25 դուռուշ է քիլին , որ 21-22 օխայ կուգայ :

ԱՐՇԱԼՈՅՍ ԵՐԱՐԱՏԵԼՆ . Եւ () Երբ

շաբաթը անգամ մը կը տըպվի :

Տարեկան ստորագրութեան գինը՝ 120 դուռուշ է . կանխիկ . ով որ ուղէկընայ ստորագրվի :

Իզմիր՝ օրագրութեան տպարանը :

Պօլիս՝ Սէլիք խանը Իզմիրցի Սաւալանեան Վաւթ աղային գրատունը :

Պուրտա՝ Քաղաքճեան Սաւալանեան Վաւթ աղային մաղաղան :

Լըլըսանգրիա՝ Լըլըսանեան Կարսպետ աղային մաղաղան :

Յոպպէ (Լաֆա) մեծապատիւ Սուրատ աղային գրատունը :

Թրեսուտ՝ Լըլըսան Վրիդոր աղային գրատունը :

Լըլըլըմ՝ Հալիօրճեանեան աղայ Սարգսին մաղաղան :

Լիլն՝ Քարիկեանց Հարութիւն աղային մաղաղան :

Տիարպէքի՝ Պարոն Վամիսնոսին մաղաղան :

Լաշ՝ Պըլըքըլեան աղայ Եղարց մաղաղան :

Պաղտա՝ Լըլըլըլըլ առաջին թարգման աղայ Խաչիկին տունը :

Վաւթի՝ Լըլըլըլեան Կաղարեանց Հալիօր աղային վաճառատունը :

Պոմպա՝ յարգի պարոնաց Լըլըլըլըլ որդւոց և ընկերաց վաճառատունը :

Սինկափոր ու Պաղալիա՝ յարգի պարոնաց Սէթ և Եղարց գրատունը :

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՏԵՓԵՆՆՈՍԻ ՊԵՊՈՆԵՆ՝